

## ԲԱՐՔԱՈՍՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Յ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՐՁԱՎՈՒՄ

### Մ. Մ. ՀԱԼԱԶՅԱՆ

Հ. Մաթևոսյանի արձակի լեզվի առանձնահատկությունները պայմանավորված են նրա ստեղծագործությունների թեմատիկայով ու պատկերվող միջավայրով: Գյուղի կենցաղն ու առօրյան արտացոլող վիպակներն ու պատմվածքները գրված են այնպիսի լեզվով, որը համապատասխանում է տվյալ միջավայրին պատկանող անձանց լեզվամտածողությանը: Ժողովրդական լեզվամտածողության դրսևորման հիմնական եղանակը Հ. Մաթևոսյանի արձակում, անշուշտ, ժողովրդախոսակցական բառապաշարի, դարձվածքների ու ժողովրդական արտահայտությունների գերմոտմունն է: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ զանազան լեզվական ու ոճական խնդիրներ լուծելու նպատակով գրողը դիմում է բարբառի գործածությանը:

Բարբառային են համարվում գործածության սահմանափակ շրջանակներ ունեցող բառերը՝ ի տարբերություն ոչ գրական՝ ժողովրդախոսակցական բառերի, որոնք ընդհանուր համագործածական են, այսինքն՝ տեղային սահմանափակումներ չունեն:

Տարբեր են նաև գեղարվեստական խոսքում այս երկու տիպի բառերի թե՛ կիրառելիության ոլորտներն ու աստիճանները, թե՛ նրանց գործածության նպատակները: Ժողովրդախոսակցական բառերն անհամեմատ ավելի ազատորեն են մուտք գործում գեղարվեստական գրականության լեզու, քան բարբառայինները: Վերջինիս օգտագործումը պիտի տեղին ու պատճառաբանված լինի, այլապես կարող է համարվել անհարկի կամ դիտվել որպես լեզվական շեղում<sup>1</sup>: Բարբառային բառերի գործածության դեպքում գրողը պիտի առաջնորդվի գեղագիտական ճաշակով ու չափի զգացմամբ:

Բարբառային բառերը գործածվում են մեծ մասամբ այն դեպքում, երբ անհրաժեշտ հասկացությունը ցանկալի ճշտությամբ կարող է արտահայտել միայն բարբառը, որոշ դեպքերում էլ ծառայում են ոճական որոշակի նպատակների: Այդպիսիք են բարբառի օգտագործմամբ միջավայրի բներանգի ստեղծումը, կերպարի լեզվական անհատականացումը, կամ էլ տվյալ բարբառային բառի միջոցով այս կամ այն հուզարտահայտչական երանգի դրսևորումը:

Առաջին դեպքում բարբառային բառերը տվյալ մտքի ձևակերպման հստակությանը նպաստելուց բացի դառնում են նաև լեզվի բառապաշարի հարստացման միջոց: Ծառ բարբառային բառեր գրական լեզու են թափանցել գեղարվեստական գրականության մեջ գործածված լինելու շնորհիվ<sup>2</sup>:

Որքան էլ հարուստ լինի գրական հայերենի բառապաշարը, բարբառներում դեռևս գոյություն ունեն բազմաթիվ բառեր, որոնց ճշգրիտ համարժեքները ո՛չ գրական լեզվում, ո՛չ էլ ժողովրդախոսակցականում չկան: Կամ էլ գրական հոմանիշը պահանջվող նրբիմաստը չունի:

Այսպես՝ Հ. Մաթևոսյանի արձակում գործածվում են տորք, քաշան, յարու, լատան, ծոխանք, բուխարի և մի շարք այլ բարբառային բառեր, որոնց իմաստը գրական

<sup>1</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 41-43:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989, էջ 175:

լեզվում արտահայտվում է միայն Ակարագրական եղանակով: Իսկ մտքի ձևակերպման սեղմությունը գեղարվեստական խոսքի արժանիքներից մեկն է: Եվ եթե համատեքստի բովանդակությունը տվյալ հնակացության պահանջն ունի, բարբառային բառի գործածությունը լինում է միանգամայն տեղին ու արդարացված:

«Պատիժը» պատմվածքում գրողը Ակարագրում է խոտի հավաքը. կանայք շալակով անտառի բացատից խոտի խոշոր խրձեր են տեղափոխում: «Տղան կապույտ աղբյուրի մոտով ելավ լեռան գլուխը – մյուս երեսի ամբողջ լեռնահովտով մեկ խոտի բլուրներ էին շարժվում, մի տեղ միայն խոտը եզներով էին քաշում, բայց հեռավորությունից էր թե ինչ՝ եզների քաշանը կանանց շալակներից մեծ չէր երևում»<sup>1</sup>:

Քաշանը բարակ ծառերի կապուկն է կամ խոտի դեզը, որ լծին միացնելով՝ քաշելով տուն են տանում անտառից<sup>2</sup>:

Բառի օգտագործումը այստեղ, ինչպես տեսնում ենք, և՛ նախադասությունը զգալիորեն կրճատելու հնարավորություն է տվել, և՛ միևնույն ժամանակ ստեղծել է միջավայրի ու ժամանակի բերանագ:

Նման ռեական դեր է կատարում նաև նույն պատմվածքում գործածված ծոխանք (ճաշի տակի ջուրը) բառը: «Պղտոր, ծոխանքի, շան լափի գույն աղջամուղջում, վառարանի թույլ ցուլքերի դեմ հայրը մի ոտքը ծնկել ու զգրոցից մեխ էր ջոկում»:

Մի քիչ հետո՝

«Վառարանի վրայինը կերակուր չէր, ծոխանք ու լափ էր» (469-1):

Բառը ոչ միայն լավ է բնութագրում մոայլ աղջամուղջը, այլև կարծես լրացուցիչ անգամ շեշտում է այդ աղջատիկ տանը կերակուրի բացակայությունը:

Այսպես նաև անփոխարինելի է յաբու՝ բառը համապատասխան խոսքաշերտում: «Տաշքենդի» հերոսներից մեկը պարծենում է, թե ինչպես է ռուս կանանց նայեցրել ձիուն ու Ակարել տվել: Մի ուրիշը հարցնում է.

-Ի՞նչ ձի:

-Ջանդաղը խեղճացավ ու փզը ծոց: Սիմոնի խեղճ յաբուն,- ասաց (275-2):

Մի ուրիշ տեղում հեղինակը Ակարագրում է «պառավ աշխարհի» քանդվող Ծմակուտի վերջին ձիերին. «Իրարից այնքան հեռու՝ որ տեսնողն ասի երեքն են ու երկուսը չեն և իրար այնքան մոտիկ՝ որ նայողը տեսնի ու ասի նրանց երեքի հին միությունն է, գլուխները բարձր կանգնել էին Ռոստոմի շիկաբաշ հովատակը, Ավագի պառավ մադյանը, Սիմոնի կարմիր յաբուն՝ Ծմակուտի վերջին ձիերը» (276-2):

Վերը բերված բառերի օգտագործումը պատճառաբանված է թեկուզ միայն նրանով, որ սրանք գրական համարժեքներ չունեցող բառեր են: Այսպիսիք եթե անգամ համաժողովրդական լեզվում լայն գործածություն ձեռք բերելու հավակնություն չունենան էլ, համապատասխան համատեքստերում տեղին են, անհրաժեշտ ու ռեականորեն հիմնավորված:

2. Մաթևոսյանի արձակում կան բարբառային մի շարք բառեր էլ, որոնք թեև ունեն իրենց գրական հոմանիշները, սակայն որոշ նրբիմաստներով տարբերվում են դրանցից և դրանով իսկ արդարացնում գեղարվեստական խոսքում իրենց գործածության իրավունքը: Վերջիններս, շնորհիվ իրենց այս կամ այն նրբիմաստի, մեծացնում են խոսքի պատկերավորությունը, համատեքստին հաղորդում հուզաարտահայտչական երանգներ: Յախու բարբառային բառը, օրինակ, գրական լեզվում իր համարժեքը ունի՝ սպեղանի: Սակայն միշտ չէ, որ սպեղանին լիովին կարող է փոխարինել նշված բառին: Յախուն ավելի շատ տնայնագործական, ձեռքի պատրաստած փրակապ է նշանակում: Իսկ սա այն նրբիմաստն է, ինչը հատկապես ցանկացել է ընդգծել գրողը հետևյալ հատվածում.

«Տան մեջը քար էր, քանդելիս Սիմոնի փորը պատուվեց. պառավը եկավ, յախու դրեց փորին: Աղունը դեռ զցեց պառավի դրած յախուն, ինքը սարքեց, լավ չկպավ, բայց հո ինքն էր արել»(22-2):

<sup>1</sup> 2. Մաթևոսյան, Երկերի ժողովածու, Եր., 1985, Բ. 1, էջ 488 (այսուհետ շարադրանքում կը նշենք օրինակների էջը և հատորը):

<sup>2</sup> Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Բ. Բ, Եր., 1976:

<sup>3</sup> Տե՛ս էդ. Աղայան, նշվ. բառարան. Բ. Ա, Եր., 1976, յաբու - չափազանց նիհար, քոստո ձի:

Այսպես նաև բարբառային պոուս բառին ռճականորեն չեզոք կաթիլը լիովին փոխարինել չի կարող, նախ, որովհետև պոուսը ավելի փոքր կաթիլն է, ապա և ունի լրացուցիչ իմաստ՝ չնչին, աննշան:

«Քո պապ Ավետիքի քնած, դանդաղ, բա՛րի էն էլ ես ինչ իմանամ բարի՞ թե վախկոտ չեղած մի պոուս արյունը էդ ո՛նց կարողացավ կտրել մերանի պես քո մեջ Իշխանի տված էն կատաղի վարար արյունը, անշարար, խաբեբա, շողոմքոր, համարձակ, անքուն, վրիժառու, զնգուն - զվարթ - ավագույն առնաուտի արյունը քո մեջ էդ ո՛նց կտրվեց Ավետիքի քնած մի պոուս արյունից» (272-2):

Ստեղծված հակադրության մեջ կատաղի, վարար, անդադար և այլն և դանդաղ, քնած, չեղած իրադրական հակահիշմանի շարքում իր ուրույն ռճական դերն է կատարում պոուս բարբառային բառի նրբերանգը՝ նպաստելով հակադրության սաստկացմանը:

Նրբիմաստային տարբերություններ ունեն նաև շվարել-մոլորվել հոմանիշները, որոնց գործածությունները գտնույմ ենք Հ. Մաթևոսյանի արձակի տարբեր հատվածներում: Այնտեղ, որտեղ գրական բառի իմաստը բավարարում է բովանդակության արտահայտմանը, գրողը գործածում է գրականը՝ բարբառայինը թողնելով այն դեպքերի համար, երբ անհրաժեշտ է համապատասխան նրբերանգի շեշտումը: Ասել է թե գրողը խուսափում է բարբառային բառերով խոսքը ավելորդ անգամ խճողելուց և հաճախ նման բառազույգերից գերապատվությունը տալիս է գրականին:

Այսպես՝ մոլորվել-ը ունի շփոթության մեջ ընկնել իմաստը, որով գործածված է հետևյալ հատվածում.

«Պառավը մոլոր մնաց, մնաց ու ճանկեց Աղունիս»(17-2): Այստեղ բառիմաստը լիովին բավարարում է ասելիքին: Սակայն որոշ դեպքերում իրավիճակը ճշտորեն բնորոշել կարող է միայն «շվարել»-ը՝: «Մենք ենք, մեր սարերը» վիպակի մի դրվագում գյուղին ու գյուղացուն անսովոր սարքը՝ հեռախոսը, զանգում է այն պահին, երբ նախագահը տեղում չէ, և գրասենյակում հավաքված հովիվները չեն կարողանում որոշել իրենց անելիքը:

«Հեռախոսը զնգզնգաց: Հովիվներն իրար անցան, ապա շվարեցին: Իսկ այդ խայտառակիչ հեռախոսը նրանցից մեկին անպայման կանչում էր ու կանչում: Հովիվները իրար երեսի նայեցին, հետո առաջ օցեցին նրան, ում որ սարերում ամենից շատ էին ձեռ առնում:

-Սաքո, մեջներիս հասկացողը դու ես...» (47-1):

Կասկածից վեր է, որ այս հատվածում մոլորվել-ը շատ ավելի թույլ կհնչեր:

Նման զուգահեռ ձևերի քննությունը պարզաբանում է, որ բարբառային բառերի գործածությունները ինքնանպատակ չեն, այլ թելադրված են հիմնավոր դրոշմապատճառներով: Կանխավ նշենք, սակայն, որ այս հարցում Հ. Մաթևոսյանը որոշ անհետևողականություն է հանդես բերում. հատկապես վերջին շրջանի գործերում բարբառայնություններն անհարկի կերպով հաճախացած են: Անհասկանալի է, օրինակ, թե ինչու է գրողը առանց հատուկ անհրաժեշտության բաժին-ի փոխարեն օգտագործում փայլը, բացի շաղկապի փոխարեն՝ սավայի, կամ էլ հաճախացնում էնիք-ը, ըոխավոր-ը և այլն:

Ինչ վերաբերում է առաջին շրջանի գործերին՝ մասնավորապես «Բեռնաձիեր», «Մենք ենք, մեր սարերը», «Աշման արև», ապա այստեղ գրողի վերաբերմունքը մեծ մասամբ հստակ է ու որոշակի: Կոնկրետ օրինակով կարելի է ցույց տալ, որ նշված գործերում հեղինակը գրականացնում է գործող անձանց լեզուն, խուսափում բարբառային բառերով խոսքը խճողելուց:

Այսպես. Գիքորը, զգալով ձիու դողը արդեն իսկ ուժից վեր բեռան տակ, մի պահ տատանվում է՝ միջնահակը դձի՞, թե՞ չդձի: «Գուցե այդ զահրումար միջնահակը չդձի, հա՞... Աչքերը փակի ու չդձի, դժոխքը, աշխարհիս երեսին ոչ ոք էլ սովից չի սաստկել» (186-1):

՝ Ըստ Աղայանի նշվ. բառարանի՝ շվարել-ը, բացի մոլորվելուց, նշանակում է նաև անճար փիճակի մեջ ընկնել:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ այս արտահայտության մեջ գրողը բարբառային փոխաբերն օգտագործել է գրական համարժեքը: Մի այլ տեղում հեղինակը բառի ընտրությունը կատարել է այնպես, որ և՛ խոսափի բարբառային բառից, և՛ չդնի մի այնպիսի գրական բառ, որ խոսքը կորցնի հավաստիությունը: Այսպես, օրինակ՝ «Նծույզս, անծույզս» պատմվածքի հերոսներից մեկը ասում է.

- Մի թևս խափան մարդ եմ,- և շարժեց բարակ ուղիղ մատներով ձեռքը:

... - Ու եթե պետք լինի՝ մյուս թևս էլ կչորացնեմ (305-1):

Հասկանալի է, որ գյուղացին այսպիսի դեպքում կգործածեր սախաբ բառը, որի գրական համարժեքն է՝ խեղված: Վերջինս գրեթե գրքային բառ է և դժվար թե տեղ ունենա առօրյա բանավոր խոսքում: Եվ գրողը ընտրում է լավագույն՝ միջին տարբերակը: Այսինքն բարբառայինը փոխարինում է մոտավոր իմաստն արտահայտող այնպիսի բառերով, որոնք և՛ գրական են, և՛ անհավանական չեն հնչում հասարակ ժողովրդի խոսքում:

Հ. Մաթևոսյանը չի խոսափում բարբառայինը գրականով փոխարինելուց նույնիսկ այն դեպքում, երբ գրականը զուրկ է բարբառայինի համապատասխան իմաստից: Խոսքը վերաբերում է «Աշնան արևի» մի դրվագում պայտել բառի գործածությանը: Արա բարբառային հոմանիշը (նալել) փոխաբերաբար նշանակում է խիստ՝ բերանը փակող խոսք ասել<sup>7</sup>: Գրական պայտելը այս փոխաբերական իմաստը չունի: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարել հեղինակին, որ գործածի գրականը՝ նրան վերագրելով բարբառայինի համապատասխան իմաստը.

- Արուս ջան, պառավին մատ եմ արել: Գնում եմ Երևան: Հա, պառավին պայտեցի, մի հինգ տարում եթե մաշեց... (35-2):

Այս երևույթը ըստ էության լեզվի գրական և խոսակցական տարբերակների մերձեցման ձևերից է: Իսկ գեղարվեստական գրականության անաքելությունը ոչ միայն գրքայնության հաղթահարումն է ժողովրդական լեզվի (այդ թվում՝ բարբառների) կենսունակ տարրերի օգտագործումով, այլև կենցաղային խոսքի մշակումը գրականի միջոցով: Այս եղանակով հղկվում է խոսակցական լեզուն, բարձրանում մի նոր մակարդակի:

Բարբառի օգտագործմամբ գեղարվեստական գրականության մեջ լուծվում են նաև այլ կարգի ոճական խնդիրներ: Գրանցից մեկը կերպարի լեզվի տիպականացումն է: Գոյություն ունի ոճական այս նպատակադրումով բարբառի օգտագործման երկու տարատեսակ: Մի դեպքում գրողը կերպարներից մեկին (կամ մի քանիսին) ընդհանրապես խոսեցնում է բարբառով կամ բարբառախառը լեզվով: Հերոսների լեզվական անհատականացման այս եղանակը, որը գեղարվեստական առումով այնքան էլ խրախուսելի չի համարվում<sup>8</sup>, Հ. Մաթևոսյանի գեղագիտական սկզբունքներից չէ:

Բացարձակապես բարբառախոս հերոսներ գրողի արձակում չկան: Մյուս դեպքում գրողը կերպարի խոսքին երանգավորում տալու նպատակով վերջինս լեզուն տեղ-տեղ է միայն բարբառայնացնում՝ հատկապես այդ խոսքին լրացուցիչ ոճական երանգներ հաղորդելու նպատակով: Այս երկրորդ եղանակը համարվում է առավել նախընտրելի: Այսպիսի դեպքերում բարբառի ոճական արժեքը շատ ավելի մեծ է լինում:

Մի բնորոշ օրինակով ցույց տանք, թե ոճական ինչպիսի խնդիրներ է լուծում գրողը բարբառի օգտագործումով:

«Մենք ենք, մեր սարերը» վեպակի հերոսներից մեկի՝ Պավլեի լեզուն հիմնականում գրականն է: Վիպակի վերջում հեղինակը գործ է դնում ոճականորեն պատճառաբանված գրական հնարանք. արդեն քաղաքաբնակ նախկին հովվին խոսեցնում է բարբառով.

«Հյուրեր են լինում քաղաքի իր ընկերներից՝ ավելուկով ճաշը բրդում է, գդալը քաշած ուտում գլուխկախ: Եվ ամանը դեմ է անում կնոջը:

<sup>7</sup> Տե՛ս էդ. Աղայան, նշվ. բառարան:

<sup>8</sup> Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 120:

-Թե կա՝ մին էլ ածա:

Վրան էլ կեղևը հետը կարտոլ է ուտում ու սառը ջուր խմում: Ու կարտոլի պարկի կողքին՝ դաշնամուր: Անտառամեջից ամեն եկողի տանում ցույց է տալիս. «Ըրեխանցն ա, թնկթնկացին ուզեցին՝ առա: Մի քիչ թանկ ա, բայց դե քրեխանցն ա: Ինչի՞ որիշիքն ունենա, իմոքը չունենան» (143-1):

Ահա այսպես է խոսում Պավլեն քաղաքի իր բնակարանում: Մինչդեռ բոլորովին այլ է նրա լեզուն վիպակի այլ տեսարաններում: Որպես օրինակ բերենք առավել տպավորիչ հատվածներից մեկը՝ վեճը քննիչի հետ.

«Այս կարճ կյանքում մարդուս հասնում է դառնության մի բաժին, ուրախության էլ՝ մի բաժին: Տղամարդու նման ես իմ բաժին տանջանքը կերել եմ: Ոչ ոքի չեմ խնդրել թեկուզ մի պատառ, թեկուզ մի գդալ վերցնելու տանջանքի իմ բաժնից: Ու հիմա ես իմ ուրախության բաժնի վրա եմ և նորից տանջանք համտեսելու ախորժակ չունեմ» (132-1):

Ինչպես տեսնում ենք, այս հատվածը հեղինակը շարադրել է բացառապես գրական լեզվով: Այստեղ ոչ միայն բարբառային, այլև ժողովրդախոսակցական բառեր կամ բառաձևեր չկան: Իսկ գեղեցիկ փոխաբերական արտահայտություններն առավել գրավիչ են դարձնում այս կուռ տրամաբանությամբ ու հուզական երանգներով հագեցած խոսքը: Բարբառային որևէ արտահայտություն այս հատվածում միանգամայն ավելորդ կլիներ: Պավլեն այստեղ մտածող, տրամաբանող անհատ է, և ճիշտ է վարվել գրողը՝ խոսքը կառուցելով միայն գրական բառերով: Նախորդ հատվածում իրավիճակն այլ է. գրողն իր առջև խնդիր է դրել ստեղծել ծայրաբևեռային հակադրություն, որպեսզի ընդգծի Պավլեի՝ քաղաքային կենցաղին անհարիր լինելը: Այս նպատակադրման իրականացմանը մեծապես նպաստում է բարբառի գործածությունը: Այդ խիստ բարբառային, հասարակաբանություններով հագեցած խոսքը նույնքան անհամապատասխան է քաղաքին, որքան անհեթեթ տեսք ունի Պավլեի բնակարանը՝ «կարտոֆիլի պարկի կողքին՝ դաշնամուր»:

Բարբառային բառերի գործածության հետ կապված՝ հարկ է անդրադառնալ Հ. Մաթևոսյանի գրական հնարներից ևս մեկին: Երբեմն հեղինակը մեկ բառի միջոցով բացահայտում է կերպարի էությունը կամ նրա՝ տվյալ պահի հոգեվիճակն ու ապրումները: Նման ոճական դեր են կատարում ավելի մեղ տարածքին՝ որևէ գյուղի խոսվածքին հատուկ բառերը: Այսպիսիք ուղեկցվում են հեղինակի «միջամտությամբ». բառի օգտագործումից անմիջապես առաջ կամ հետո գրողը տալիս է բառի բացատրությունը: Այսպիսով, ոչ միայն ընթերցողին հասկանալի է դառնում անծանոթ բառը, այլև հուշվում է վերջինիս գործածության ոճական նպատակը:

Այսպես՝ Մոսկվա «բազմազան» քաղաքում սովորող գյուղաբնակ երիտասարդը տարօրինակ երագ է տեսնում. «Իբր թե այսօրվա Արմենն էի և խանձարուրի մեջ տղայիս տանում էի պապոնց արևոտ դռներով մեր տուն: Հետո՞ պապոնց դուռն ու պատուհանները մութ էին, չափարների բանջարակուտը բարձր էր և արահետը մեղ, և իմ դեմն ու գլխավերևը կախված գալիս էր ահռելի անասուն: «Մի արթնացիր, - ասացի ես, - ծաթերեցոնց դաթիրն է, հիմա կանցնի՝ ոտնաձայնը կհեռանա»:

Եվ ապա՝ «Արթնացա այդ կանաչ սենյակում, հանրակացարանում, Մոսկվայում: **Ղաթիրը՝ ջորի՞ն** որտեղից հիշեցիր» (208-2):

Ուշագրավ է, որ գրողի՝ գյուղական կյանքը արտացոլող և ոչ մի ստեղծագործության մեջ ջորու փոխարեն **ղաթիր** չի ասվում: Այդ դեպքում, թերևս, մեղ բարբառային բառի գործածությունը ինքնանպատակ լիներ, մինչդեռ այստեղ դա գեղագիտական հնարանք է, հարազատ վայրերից հեռացած մարդու կարտոլը իր մանկության գյուղին արտահայտվում է մեկ բառի միջոցով. գյուղական կյանքը հառնում է երիտասարդի մտապատկերում՝ որպես մեծ քաղաքին տրամագծորեն հակադիր միջավայր՝ իր հետ բերելով բարբառային բառը:

Մի այլ դեպքում ծնունդով գյուղացի, բայց գյուղից ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես հեռացած գեներալը համագյուղացիների հետ գրույցի ժամանակ հիշում է գյուղի ջրվեժը, որի տակ երեխա ժամանակ լողանում էր:

- Հիշու՞մ ես,- ժպտաց գեներալը,- ես ու դու ուզում էի՞նք ջրվեժի տակ լողանալ... ինչպես եք ասու՞մ... ջրվեժի՞ն, ջրվեժի՞ն, հա՛, չնչո՞ւ... չնչո՞ւ, չնչո՞ւ... Չես հիշու՞մ, ես ու դու ուզում էի՞նք չոչո՞րի տակ լողանալ, ջուրը փրփուր էր, սպիտակ էր, հատակը չէր երևում, կարծում էի՞նք խո՛ր, խոր կլի՞նի, ահուդողով մտանք՝ ծնկներից հետ էր... Վայ չըռչը՛ն, չըռչը՛ն... Ո՞նց է չոչո՞րը (135-1):

Գեներալը մոռացել էր մայրենի խոսվածքի բառը, հարցնելիս էլ համազուտացի-ներից երկրորդ դեմքով է դիմում՝ ինչպես եք ասու՞մ: Այսինքն թե այդ բառը այլևս իրե-նը չէ, և իր մոտ խնդրանքով եկած համազուտացիների հոգսերն էլ իրեն չեն մտահո-գում:

Ժողովրդական բանավոր խոսքում պատկերավոր արտահայտվելու տարածված եղանակ է որևէ բարբառի կրողի խոսքը վերարտադրելիս տվյալ բարբառին բնորոշ բառեր գործածելը: Այս իրողությունը ևս չի վրիպել հեղինակի աչքից: Պատումը վարե-լու ժողովրդական այս հնարը գորող վարպետորեն կիրառել է «Ծառերը» պատմվածքի դրվագներից մեկում: Ընկույզի ծառի տակ գտնում են համազուտացիներից մեկի ար-նաթաթախ դիակը. «ամուսինն իջել է ջաղացաձորի լանջերը ընկույզ թափ տալու: Վաճ-քերն ու Հախպատը կակալ են ասում»:

Բառի գործածության տարածքի նշումը նպաստում է ոճական նպատակադրման իրականացմանը. համատեքստի շարունակությունն այսպիսին է. սպանվածի հախպա-տեցի կինն ու պատմվածքի մեկ այլ գործող անձ՝ վանքերեցի Իշխանը, ծառի տակ թափված ընկույզ չտեսնելով՝ տարակուսում են. «Էս տղեն թե էս ծառին է բարձրացել՝ թափ տված կակա՞լն ուր է, թե էս ծառին չի բարձրացել՝ ինչու՞ է սրա տակ ընկած» (261-2):

Հ. Մաթևոսյանի արձակում կան հաճախակի կրկնվող բարբառային մի շարք բա-ռեր, որոնց միջոցով պատումը բերանագային գունավորում է ստանում, ստեղծվում է մի-ջավայրի պատրանք: Սրանք թեն նեղ տարածքային գործածություն ունեցող, սակայն միանգամայն հասկանալի բառեր են: Դրանք են մակբայների բարբառային տարբե-րակները՝ հրես, հրեն, հրեդ, դեսը, դենը, մի շարք բարբառային բառածևեր՝ միտ, մին, ծնել, մերացու, լողվա խոսվածքի համար տիպական այտա կոչականը, ական (լրիվ, ամբողջապես) բառը և այլն: Նշված բառերը լեզվին հաղորդում են առօրյա խոսակցա-կան ոճի թեթևությունն ու կենդանությունը, պատումը դարձնում են հավաստի: Ահա այդպիսի բառերի գործածության մի քանի օրինակ Հ. Մաթևոսյանի տարբեր ստեղծա-գործություններից.

- Այտա՛, տանձո հրես ձեռից գնում է: Էսօր տակառ թոջիր, առուն հրեդ, էգուց էս տանձից մի հատ չլինի վրան: Բո տու՛նը շինվի, ձեռիցդ հազար է թոչում, դու օրը ցերե-կով քուն էս մտնում (163-1):

«Սպիտակ թարմ հաց ամեն օր լինում է, էլեկտրակայանի փուռը հրեն» (219-1):

«Մյուղերը դուրս պրծան ու հասած տանձը թափվեց:

-Կարելի՞ է տանձ վերցնել,- և շալակի տակ ոչ այն է կքում էր, ոչ այն է կոանում:

-Տո հիմա՛ր,- գոռաց Անդրոն,- հրեդ բերանդ է մտնում, վերևից քաղիր էլի» (161-1):

-Բա՛ մեր տան գործերը ու՞մ թողնեինք:

-Բա չեկա՞ր տեսար խոզերը ական են, հավերը ական են, շունը սոված չի (49-2):

-Սերո ջա՞ն... մի բան էր միտս, Սերո ջան (49-2):

Նշված բառերի շնորհիվ գործող անձանց խոսքը դառնում է անմիջական, անբը-նագրոսիկ: Լեզուն ձեռք է բերում հավաստիություն՝ միևնույն ժամանակ չկորցնելով քարեհնչյունությունը:

Այսպիսով, տարբեր են գեղարվեստական գրականության լեզվում զանազան բնույթի բարբառային բառերի դերն ու նշանակությունը: Համապատասխանաբար տարբեր են նաև դրանց նկատմամբ մտնեցումներն ու գնահատման չափանիշները: Ըստ լեզվում ունեցած գործառույթի՝ բարբառային բառերը բաժանվում են մի քանի տարատեսակների: Գրականության լեզվում կիրառելիության տեսակետից ամենաան-վիճահարույցը գրական լեզվում համարժեքը չունեցող բարբառային բառերն են:

Սրանց գործածությունն ընդունվում է անվերապահորեն: Այսպիսի բառերը գնահատվում են ոչ միայն գեղարվեստական գրականության լեզվում, այլև ընդհարապես համաժողովրդական լեզվում ունեցած նշանակության տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ նման բառերը, բացի տվյալ ստեղծագործության մեջ ունեցած ոճական դերից, նաև բնականաբարի հարստացման գործառույթ են կատարում՝ հաճախ գեղարվեստական գրականության միջոցով մուտք գործելով գրական լեզու:

Երկրորդ խմբի մեջ կարելի է դասել այն բառերը, որոնք թեև գրական լեզվում ունեն իրենց հոմանիշները, սակայն գրական բառը զուրկ է բարբառային՝ տվյալ խոսքում պահանջվող նրբերանգից կամ տվյալ համատեքստում ավելի լավ է հնչում բարբառայինը, և խոսքը դառնում է առավել տպավորիչ:

Գեղարվեստական գրականության լեզվում, ի տարբերություն նորմավորված գրական լեզվի, ոճական որոշ նպատակներով կարող են գործածվել նաև այնպիսի բարբառային բառեր, որոնց համարժեքները գրական լեզվում կան: Այդպիսիք լեզվի բառապաշարի հարստացման առումով որևէ նշանակություն չունեն: Սրանց վերապահված է բացառապես ոճական գործառույթ. գործող անձի խոսքի ոճավորում, միջավայրի բներանգի ստեղծում, ըստ անհրաժեշտության խոսքի հասարակաբանական երանգի շեշտում կամ ասելիքի նկատմամբ զգացմունքային-գնահատողական վերաբերմունքի դրսևորում: Այլ կերպ ասած՝ նման բառերը գործածվում են ոչ այնքան հասկացություններ անվանելու, որքան ընթերցողի վրա ներգործելու, անհրաժեշտ զգացողություն առաջացնելու նպատակով:

Հ. Մաթևոսյանը մեծ մասամբ դիպուկ ու տեղին է գործածում բարբառային բառերը, նրանց միջոցով ձևակերպումները դարձնում է սեղմ ու ճկուն, խոսքը՝ արտահայտիչ ու պատկերավոր: Որոշ դեպքերում էլ վարպետորեն գրականացնում է գործող անձի լեզուն:

**М. М. АЛАДЖЯН - Диалектные слова и их стилистическая роль в прозе Г. Матевосяна.** - В статье рассматриваются разные мотивы использования диалектных слов в прозе Г. Матевосяна. Во-первых, оценивается значение диалектных слов, которые не имеют равноценного эквивалента в литературном языке. Во-вторых, рассматриваются те мотивы, которыми руководствуется писатель, отдавая в том или ином контексте предпочтение диалектным словам перед литературными в тех случаях, когда замена возможна. Такое предпочтение связано с более точным смысловым и стилистическим оттенком диалектного слова.

Оценивается значение диалектизмов в формировании художественных приемов писателя, в решении некоторых стилистических задач, в частности, в создании языкового колорита, в индивидуализации речи персонажей и т. д. По ходу статьи прослеживается стремление писателя не злоупотреблять диалектной лексикой и даже напротив - по возможности приблизить разговорную речь к литературной.